ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐ

ՀՐԱՄԱՆ

№ 954-Ա/Ք 18 . 10. 2012թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ <<ԼԱՎԱԳՈՒՅՆ ՈՒՍԱՆՈՂ>> ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ՄՐՑՈՒՅԹԻ ԱՆՑԿԱՑՄԱՆ ԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ՀՀ կառավարության 2002 թվականի սեպտեմբերի 12-ի հմ. 1579-Ն որոշմամբ հաստատված հավելված 1-ի 10-րդ կետի <<իզ>> ենթակետերով.

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ՝

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության <<Լավագույն ուսանող>> հանրապետական մրցույթի անցկացման կարգը՝ համաձայն հավելվածի:
2. Սույն հրամանը ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Արմեն Աշոտյան

Հավելված

ՀՀ կրթության և գիտության նախարարի

2012թ. հոկտեմբերի 18-ի N 954-Ա/Ք հրամանի

Կ Ա Ր Գ

<<ԼԱՎԱԳՈՒՅՆ ՈՒՍԱՆՈՂ>> ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ՄՐՑՈՒՅԹԻ ԱՆՑԿԱՑՄԱՆ

1. Ընդհանուր դրույթներ

1) <<Լավագույն ուսանող>> հանրապետական մրցույթը (այսուհետ՝ Մրցույթ) կազմակերպում և անցկացնում է կրթության պետական կառավարման լիազոր մարմինը:

2) Սույն կարգը որոշում է <<Լավագույն ուսանող>> հանրապետական մրցույթի անցկացման նպատակը, խնդիրները, անցկացման կարգը և ժամկետները, ինչպես նաև թեկնածուների ընտրության չափանիշները:

2. Մրցույթի նպատակները

1) Բացահայտել և խրախուսել ՀՀ բարձրագույն ուսումնական հաստատությունների այն ուսանողներին, ովքեր ցուցաբերել են բարձր առաջադիմություն և իրենց առավել ակտիվ են դրսևորել գիտահետազոտական, ստեղծագործական, ուսանողական ինքնակառավարման և սպորտի ասպարեզներում,

2) Նպաստել ուսանողների առաջադիմության բարձրացմանը,

3) Խթանել ուսանողների մասնակցությունը և ձեռքբերումները գիտահետազոտական և ստեղծագործական աշխատանքներում,

3. Մրցույթի խնդիրները

1) Խթանել մրցակցությունը Հայաստանի Հանրապետության բարձրագույն ուսումնական հաստատությունների ուսանողների միջև,

2) Խրախուսել այն ուսանողներին, ովքեր ցուցաբերել են բարձր առաջադիմություն, ունեն նշանակալի ձեռքբերումներ գիտահետազոտական, ստեղծագործական և սպորտի ոլորտներում, ինչպես նաև ակտիվ գործունեություն են ծավալում ուսանողական ինքնակառավարման, հասարակական կյանքի ոլորտներից որևէ մեկում:

4. Մրցույթի անցկացման կարգը և ժամկետը

1) Մրցույթը անցկացվում է երկու փուլով.

ա. ներբուհական,

բ. միջբուհական /հանրապետական/,

2) Մրցույթը անցկացվում է չորս ոլորտով.

ա. գիտահետազոտական աշխատանք /հումանիտար, բնագիտական, տեխնիկական/,

բ. ստեղծագործական աշխատանք /մշակույթ, արվեստ, գրականություն/,

գ. ուսանողական ինքնակառավարում,

դ. սպորտ,

5.Գիտահետազոտական աշխատանք /հումանիտար, բնագիտական, տեխնիկական/

1) *Ներկայացված թեկնածուների ուսման առաջադիմությունը գնահատվում է 8-10 միավորներով:*

ա. 8 միավորի կարող են հավակնել այն թեկնածուները, ովքեր բակալավրի կրթական ծրագրով մեկ ուսումնական տարվա արդյունքների ամփոփման դեպքում հաղթահարել են միջին որակական գնահատականի/ՄՈԳ/ հնարավոր առավելագույն արժեքի 78%-ը, իսկ մագիստրոսի կրթական ծրագրում ՄՈԳ-ի առավելագույն արժեքի 80%-ը:

բ. 9 միավորի կարող են հավակնել այն թեկնածուները, ովքեր բակալավրի կրթական ծրագրով մեկ ուսումնական տարվա արդյունքների ամփոփման դեպքում հաղթահարել են միջին որակական գնահատականի /ՄՈԳ/ հնարավոր առավելագույն արժեքի 80%-ը, իսկ մագիստրոսի կրթական ծրագրում ՄՈԳ-ի առավելագույն արժեքի 83%-ը:

գ. 10 միավորի կարող են հավակնել այն թեկնածուները, ովքեր բակալավրի կրթական ծրագրով մեկ ուսումնական տարվա արդյունքների ամփոփման դեպքում հաղթահարել են միջին որակական գնահատականի /ՄՈԳ/ հնարավոր առավելագույն արժեքի 82%-ը, իսկ մագիստրոսի կրթական ծրագրում ՄՈԳ-ի առավելագույն արժեքի 85%-ը:

2) Ներկայացված թեկնածուների գիտական աշխատանքներ կատարելու ունակությունը գնահատվում է 5-7 միավորներով:

ա. 5 միավորի կարող են հավակնել այն թեկնածուները, ովքեր մասնակցել են ներհամալսարանական գիտաժողովների, սեմինարների, ֆորումների (զեկուցումներ, հաղորդումներ, ելույթներ) կամ ունեն պատվոգրեր, գովասանագրեր, դիպլոմներ:

բ. 6 միավորի կարող են հավակնել այն ուսանողները, ովքեր մասնակցել են հանրապետական գիտաժողովների, սեմինարների, ֆորումների (զեկուցումներ, հաղորդումներ, ելույթներ) կամ ունեն հրատարակված աշխատանքներ հանրապետական գիտական ամսագրերում:

գ. 7 միավորի կարող են հավակնել այն թեկնածուները, ովքեր մասնակցել են միջազգային գիտաժողովների, սեմինարների, ֆորումների (զեկուցումներ, հաղորդումներ, ելույթներ) կամ ունեն հրատարակված աշխատանքներ միջազգային գիտական ամսագրերում:

3) Ներկայացված թեկնածուների հասարակական ակտիվությունը գնահատվում է 3-5 միավորներով:

ա. 3 միավորի կարող են հավակնել այն թեկնածուները, ովքեր ունեն ներֆակուլտետային հասարակական ակտիվություն:

բ. 4 միավորի կարող են հավակնել այն թեկնածուները, ովքեր անդամակցում են ներֆակուլտետային ուսանողական կառույցներին և ակտիվորեն ներգրավված են դրանց աշխատանքներում:

գ. 5 միավորի կարող են հավակնել այն թեկնածուները, ովքեր անդամակցում են համալսարանական ուսանողական կառույցներին և ակտիվորեն ներգրավված են դրանց աշխատանքներում:

6. Ստեղծագործական աշխատանք /մշակույթ, արվեստ, գրականություն/

1) Ներկայացված թեկնածուների ուսման մասնագիտական ձեռքերումները գնահատվում է 8-10 միավորներով:

ա. 8 միավորի կարող են հավակնել այն թեկնածուները, ովքեր հանդիսանում են քաղաքային և

ներբուհական ցուցահանդեսների, մրցույթների հաղթողներ:

բ. 9 միավորի կարող են հավակնել այն թեկնածուները, ովքեր հանդիսանում են հանրապետական ցուցահանդեսների, մրցույթների հաղթողներ:

գ. 10 միավորի կարող են հավակնել այն թեկնածուները, ովքեր հանդիսանում են միջազգային ցուցահանդեսների, մրցույթների հաղթողներ:

2) Ներկայացված թեկնածուների ուսման առաջադիմությունը գնահատվում է 5-7 միավորներով:

ա. 5 միավորի կարող են հավակնել այն թեկնածուները, ովքեր բակալավրի կրթական ծրագրով մեկ ուսումնական տարվա արդյունքների ամփոփման դեպքում հաղթահարել են միջին որակական գնահատականի /ՄՈԳ/ հնարավոր առավելագույն արժեքի 78%-ը, իսկ մագիստրոսի կրթական ծրագրում ՄՈԳ-ի առավելագույն արժեքի 80%-ը:

բ. 6 միավորի կարող են հավակնել այն թեկնածուները, ովքեր բակալավրի կրթական ծրագրով մեկ ուսումնական տարվա արդյունքների ամփոփման դեպքում հաղթահարել են միջին որակական գնահատականի /ՄՈԳ/ հնարավոր առավելագույն արժեքի 80%-ը, իսկ մագիստրոսի կրթական ծրագրում ՄՈԳ-ի առավելագույն արժեքի 83%-ը:

գ. 7 միավորի կարող են հավակնել այն թեկնածուները, ովքեր բակալավրի կրթական ծրագրով մեկ ուսումնական տարվա արդյունքների ամփոփման դեպքում հաղթահարել են միջին որակական գնահատականի /ՄՈԳ/ հնարավոր առավելագույն արժեքի 82%-ը, իսկ մագիստրոսի կրթական ծրագրում ՄՈԳ-ի առավելագույն արժեքի 85%-ը:

3) Ներկայացված թեկնածուների հասարակական ակտիվությունը գնահատվում է միավորներով:

ա. 3 միավորի կարող են հավակնել այն թեկնածուները, ովքեր ունեն ներֆակուլտետային հասարակական ակտիվություն:

բ. 4 միավորի կարող են հավակնել այն թեկնածուները, ովքեր անդամակցում են ներֆակուլտետային ուսանողական կառույցներին և ակտիվորեն ներգրավված են դրանց աշխատանքներում:

գ. 5 միավորի կարող են հավակնել այն թեկնածուները, ովքեր անդամակցում են համալսարանական ուսանողական կառույցներին և ակտիվորեն ներգրավված են դրանց աշխատանքներում:

7. Ուսանողական ինքնակառավարում

1) Ներկայացված թեկնածուների հասարակական ակտիվությունը գնահատվում է 8-10 միավորներով:

ա. 8 միավորի կարող են հավակնել այն թեկնածուները, ովքեր ունեն ներֆակուլտետային հասարակական ակտիվություն:

բ. 9 միավորի կարող են հավակնել այն թեկնածուները, ովքեր անդամակցում են ներֆակուլտետային ուսանողական կառույցներին և ակտիվորեն ներգրավված են դրանց աշխատանքներում:

գ. 10 միավորի կարող են հավակնել այն թեկնածուները, ովքեր անդամակցում են համալսարանական ուսանողական կառույցներին և ակտիվորեն ներգրավված են դրանց աշխատանքներում:

2) Ներկայացված թեկնածուների ուսման առաջադիմությունը գնահատվում է 5-7 միավորներով:

ա. 5 միավորի կարող են հավակել այն թեկնածուները, ովքեր բակալավրի կրթական ծրագրով մեկ ուսումնական տարվա արդյունքների ամփոփման դեպքում հաղթահարել են միջին որակական գնահատականի /ՄՈԳ/ հնարավոր առավելագույն արժեքի 78%-ը, իսկ մագիստրոսի կրթական ծրագրում ՄՈԳ-ի առավելագույն արժեքի 80%-ը:

բ. 6 միավորի կարող են հավակնել այն թեկնածուները, ովքեր բակալավրի կրթական ծրագրով մեկ ուսումնական տարվա արդյունքների ամփոփման դեպքում հաղթահարել են միջին որակական գնահատականի /ՄՈԳ/ հնարավոր առավելագույն արժեքի 80%-ը, իսկ մագիստրոսի կրթական ծրագրում ՄՈԳ-ի առավելագույն արժեքի 83%-ը:

գ. 7 միավորի կարող են հավակնել այն թեկնածուները, ովքեր բակալավրի կրթական ծրագրով մեկ ուսումնական տարվա արդյունքների ամփոփման դեպքում հաղթահարել են միջին որակական գնահատականի /ՄՈԳ/ հնարավոր առավելագույն արժեքի 82%-ը, իսկ մագիստրոսի կրթական ծրագրում ՄՈԳ-ի առավելագույն արժեքի 85%-ը:

3) Ներկայացված թեկնածուների գիտական աշխատանքներ կատարելու ունակությունը գնահատվում է 3-5 միավորներով:

ա. 3 միավորի կարող են հավակնել այն թեկնածուները, ովքեր մասնակցել են ներհամալսարանական գիտաժողովների, սեմինարների, ֆորումների (զեկուցումներ, հաղորդումներ, ելույթներ) կամ ունեն պատվոգրեր, գովասանագրեր, դիպլոմներ:

բ. 4 միավորի կարող են հավակնել այն թեկնածուները, ովքեր մասնակցել են հանրապետական գիտաժողովների, սեմինարների, ֆորումների (զեկուցումներ, հաղորդումներ, ելույթներ) կամ ունեն հրատարակված աշխատանքներ հանրապետական գիտական ամսագրերում:

գ. 5 միավորի կարող են հավակնել այն թեկնածուները, ովքեր մասնակցել են միջազգային գիտաժողովների, սեմինարների, ֆորումների (զեկուցումներ, հաղորդումներ, ելույթներ) կամ ունեն հրատարակված աշխատանքներ միջազգային գիտական ամսագրերում:

8. Սպորտ

1) Ներկայացված թեկնածուների ուսման մասնագիտական ձեռքերումները գնահատվում է 8-10 միավորներով:

ա. 8 միավորի կարող են հավակնել այն թեկնածուները, ովքեր հանդիսանում են քաղաքային և ներբուհական մրցույթի հաղթողներ:

բ. 9 միավորի կարող են հավակնել այն թեկնածուները, ովքեր հանդիսանում են հանրապետական մրցույթի հաղթողներ:

գ. 10 միավորի կարող են հավակնել այն թեկնածուները, ովքեր հանդիսանում են միջազգային մրցույթի հաղթողներ:

2) Ներկայացված թեկնածուների ուսման առաջադիմությունը գնահատվում է 5-7 միավորներով:

ա. 5 միավորի կարող են հավակնել այն թեկնածուները, ովքեր բակալավրի կրթական ծրագրով մեկ ուսումնական տարվա արդյունքների ամփոփման դեպքում հաղթահարել են միջին որակական գնահատականի /ՄՈԳ/ հնարավոր առավելագույն արժեքի 58%-ը, իսկ մագիստրոսի կրթական ծրագրում ՄՈԳ-ի առավելագույն արժեքի 60%-ը

բ. 6 միավորի կարող են հավակնել այն թեկնածուները, ովքեր բակալավրի կրթական ծրագրով մեկ ուսումնական տարվա արդյունքների ամփոփման դեպքում հաղթահարել են միջին որակական գնահատականի /ՄՈԳ/ հնարավոր առավելագույն արժեքի 60%-ը, իսկ մագիստրոսի կրթական ծրագրում ՄՈԳ-ի առավելագույն արժեքի 63%-ը

գ. 7 միավորի կարող են հավակնել այն թեկնածուները, ովքեր բակալավրի կրթական ծրագրով մեկ ուսումնական տարվա արդյունքների ամփոփման դեպքում հաղթահարել են միջին որակական գնահատականի /ՄՈԳ/ հնարավոր առավելագույն արժեքի 62%-ը, իսկ մագիստրոսի կրթական ծրագրում ՄՈԳ-ի առավելագույն արժեքի 65%-ը:

3) Ներկայացված թեկնածուների հասարակական ակտիվությունը գնահատվում է 3-5 միավորներով:

ա. 3 միավորի կարող են հավակնել այն թեկնածուները, ովքեր ունեն ներֆակուլտետային հասարակական ակտիվություն:

բ. 4 միավորի կարող են հավակնել այն թեկնածուները, ովքեր անդամակցում են ներֆակուլտետային ուսանողական կառույցներին և ակտիվորեն ներգրավված են դրանց աշխատանքներում:

գ. 5 միավորի կարող են հավակնել այն թեկնածուները, ովքեր անդամակցում են համալսարանական ուսանողական կառույցներին և ակտիվորեն ներգրավված են դրանց աշխատանքներում:

9. Մրցույթը անցկացվում է բակալավրի և մագիստրոսի կրթական ծրագրերով առանձին-առանձին:

10. Մրցույթի անցկացման առաջին փուլը յուրաքանչյուր բարձրագույն ուսումնական հաստատություն անկացնում է մինչև ընթացիկ տարվա նոյեմբերի 15-ը:

11 .Առաջին փուլի հաղթողների փաստաթղթերը ուղարկվում են ՀՀ ԿԳ նախարարության մրցութային հանձնաժողով: Յուրաքանչյուր ոլորտով բարձրագույն ուսումնական հաստատության մասնակիցների թիվը չպետք է գերազանցի 2-ը՝ բակալավրի կրթական ծրագրով՝ 1, մագիստրոսի կրթական ծրագրով՝ 1:

12. Մրցութային հանձնաժողովի նիստերը տեղի են ունենում հոկտեմբեր-դեկտեմբեր ամիսներին: Յուրաքանչյուր ոլորտի համար լիազորված մարմինը ձևավորում է առանձին հանձնաժողով, որի աշխատանքներին հրավիրվում են նաև անկախ փորձագետներ:

13. Մրցութին մասնակցելու համար հարկավոր է ներկայացնել հետևյալ փաստաթղթերը.

1) մասնակցության հայտ /համաձայն Ձև 1-ի/,

2) քաղվածք ֆակուլտետի խորհրդի նիստի արձանագրությունից,

3) ստուգման գրքույկի պատճեն, առաջադիմության թերթիկ,

4) բնութագիր բարձրագույն ուսումնական հաստատության կողմից,

5) հրապարակումների ցուցակ՝ ստորագրված դեկանի կողմից և հաստատված բարձրագույն ուսումնական հաստատության պրոռեկտորի կողմից կամ ստեղծագործական, սպորտային մրցույթներում, օլիմպիադաներում մասնակցությունը հավաստող փաստաթղթերը:

14. Վիճելի հարցերի դեպքում մրցութային հանձնաժողով են ներկայացվում փաստաթղթերի բնօրինակները:

15.Մրցույթի կազմակերպիչները

1) Ներբուհական փուլում մրցույթի կազմակերպիչ են հանդիսանում.

ա. ֆակուլտետի դեկանը և համապատասխան ամբիոնի վարիչը,

բ. բարձրագույն ուսումնական հաստատության գիտական խորհուրդը,

գ. ուսանողների հետ արտաուսումնական աշխատանքների համակարգման բաժինը,

դ. ուսանողական խորհուրդը,

ե. ուսանողական գիտական ընկերությունը,

զ. բարձրագույն ուսումնական հաստատությունների սպորտային ակումբը,

է. բուհի ռեկտորատը:

2) Միջբուհական /հանրապետական/ փուլում մրցույթի կազմակերպիչ են հանդիսանում.

ա. Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարությունը,

բ. Հայաստանի Հանրապետության երիտասարդական հիմնադրամը:

16. Մրցութային հանձնաժողովը

1) Մրցույթի անցկացման 1-ին և 2-րդ փուլերի անցկացման համար ստեղծվում են մրցութային հանձնաժողովներ,

2) Առաջին փուլի մրցութային հանձնաժողովի կազմը հաստատում է բուհի ռեկտորը,

3) Երկրորդ փուլի մրցութային հանձնաժողովի կազմը գլխավորում է ՀՀ կրթության և գիտությա նախարարը, այն կազմված է 11 անդամից և ձևավորվում է բուհերի մրցույթի կազմակերպիչների և Երիտասարդական հիմնադրամի ներկայացուցիչներից:

4) Մրցութային հանձնաժողովը հաստատում է իր գործունեության աշխատակարգը:

5) Մրցութային հանձնաժողովը,

ա. քննարկում է Մրցույթի անցկացման հետ կապված տեխնիկական և տեղեկատվական ապահովման հետ կապված հարցեր,

բ. անցկացնում է Մրցույթին ներկայացված փաստաթղթերի փորձաքննությունը,

գ. դեկտեմբեր ամսին ամփոփում է Մրցույթի արդյունքները:

6) Հանձնաժողովի նիստը իրավազոր է, եթե դրան մասնակցում են անդամների կեսից ավելին:

17.Մրցույթին մասնակցելու պայմանները

Մրցույթին իրավունք ունեն մասնակցել առկա ուսուցմամբ բակալավրի 2-4-րդ կուրսերի, իսկ մագիստրոսի կրթական ծրագրով՝ առաջին կիսամյակն ավարտած ՀՀ պետական և հավատարմագրված ոչ պետական բարձրագույն ուսումնական հաստատությունների ուսանողները, որոնք ըստ նշված ոլորտների համապատասխանում եմ հավելված 2-ով սահմանված չափանիշներին:

18.Մրցույթի արդյունքների ամփոփում

1) Մրցույթի հաղթողները որոշվում եմ մրցույթի հանձնաժողովի նիստին բոլոր մրցութային փաստաթղթերի ուսումնասիրության արդյունքների հիման վրա,

2) Մրցութային հանձնաժողովը յուրաքանչյուր ոլորտում որոշում է հաղթողներին, 1-ին, 2-րդ և 3-րդ տեղերի համար. իսկ լավագույն գիտահետազոտական և ստեղծագործական ոլորտում հաղթողները (1,2,3 տեղ) որոշվում են յուրաքանչյուր բնագավառում (հումանիտար, բնագիտական, տեխնիկական և մշակույթ, արվեստ, գրականություն),
3) Մրցույթի հաղթողներն որոշվում են հավաքած առավելագույն միավորների քանակի հիման վրա: Յուրաքանչյուր ոլորտում սահմանված չափանիշների համար մրցութային հանձնաժողովի կողմից գնահատման համար կիրառվում է <<3-ից 10 միավորանոց գնահատման սանդղակը>>,
4) Մրցութային հանձնաժողովը վերջնական որոշումը կայացնում է բաց քվեարկությամբ: Հանձնաժողովի անդամների կարծիքները և առաջարկությունները լրացուցիչ խրախուսման վերաբերյալ ներառվում են մրցութային հանձնաժողովի արձանագրության մեջ,
5) Մրցութային հանձնաժողովի նիստը իրավազոր է, եթե ներկա են հանձնաժողովի անդամների ոչ պակաս քան 2/3-ը,
6) Մրցութային հանձնաժողովը լիազոր է հանդիպել երկրորդ փուլ անցած բոլոր մասնակիցների հետ:

19.Մրցույթի հաղթողների պարգևատրում

1) Մրցույթի հաղթողները պարգևատրվում են հատուկ դիպլոմներով, ինչպես նաև դրամական մրցանակներով,
2) Մրցութային հանձնաժողովը կարող է նաև հատուկ խրախուսական մրցանակներով պարգևատրել այն ուսանողներին, ովքեր չեն ճանաչվել հաղթող, սակայն ցուցաբերել են բարձր արդյունքներ:

Ձև 1

Հ Ա Յ Տ

<<ԼԱՎԱԳՈՒՅՆ ՈՒՍԱՆՈՂ>> ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ՄՐՑՈՒՅԹԻ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅԱՆ

Ոլորտ	
Բարձրագույն ուսումնական հաստատության անվանումը, ֆակուլտետը, կուրսը	
Մասնակցի անուն, ազգանուն, հայրանունը	
Ծննդյան ամսաթիվը	
Կոնտակտային հեռախոս	
Կցվող փաստաթղթերի ցանկ	